4. Ներալ

Հանդերձեալ է Իլարիոն գալ ի քաղաքն. և քաղաքն ամենայն քաղցր յուսով ներային և աչօք տենչային տեսանել ամենեքեան զէմս Իլարիոնի միայն (էջ 102)։

Եթէ աղճատուած գրչութիւն մը չէ՝ կը նշանակէ «յոյսով լցուիլ կամ սպասել»։

Ա.Բ ունի նիտալ «եռալ, վառուիլ», որ չգիտէ Ն.Հ.Բ այս խմաստով. անշուշտ աղբիւրը վերի վկայութիւնն է։

5. Ստիխարին

Եւ էր ժառանգութիւն Աւետարանն զոր քահանայական ձեռք Իլարիոնի գրեցին մինչ տակաւին ևս մանուկ էր, և փիլոն ստիխարին, և կուկուլն մագեղէն, զոր կրօնաւորքն այսպէս անուանել սովոր են (էջ 132)։

= յն. στιχάριον «կրօնաւորական ըզգեստ»։

Հ. ԱՇԱՌԵԱՆ

ԲԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Ըսուած է թէ շատ անգամ մոռցերը հասկանալու համար, պէտք է տեսնալ թէ ի՞նչ բանի մէջ կը համաձայնին, և ինչ բանի մէջ կը տարբերին իրարմէ։ Գրիգոր Նէյուքեան օրէնք է Սէրն առ Աստուած և առ մարդիկ։

Գեղջ, եթէ հարցնեմ, այս բարոյականը ինչն ըստ ինքեան կ'ընդունիս և կը ցանկաս հետևիլ, և երկանիկ պէտի համարէիր զքեզ եթէ կարենայիր տարածել ընդհանուր աշխարհ։ Բայց անիկայ Աւետարանի մէջ տարտամ և հոգմերէն տարուբերուող սկզբունք մը չէ։ Դու հաւատաք բաները կը մերժես, որովհետև քեզի սխալ կը թուին և ներմուծանութեան գործերը իբրև անօգուտ. ահա գմեզ բաժանող կէտը։

Գինէ և տես դարձեալ։ Բանավարութիւնը չիմանաս լապտեր մ'է. բայց Աստուած տուեր է մեզ զայն, և մենք պէտք է այնպէս մեր ձեռքով պաշտպանենք որ չմարի։ Ուրեմն յանձնապատան փիլիսոփայի պէս մի հաւատար. ինչ որ ալ լլինի անոնց հաւատիացումներն զոս քաջութիւն ունեցիր քեզէն դատելու։ Գուցէ ճան չընաս թէ հաւատոյ սովրեցուցած ճշմարտութիւններն և ներմիտանկական գործերն՝ կամարի երկու ծայրի հասատուն խարխիններն են և անհրաժեշտ կարևոր բարոյականի համար։

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ՑԱՂԹԱՆԱԿ

(Շար. տես 1919 թզմ. էջ 87)

Թաթար բանակներ դիակներ ցանելով, կ'անցնին Վրաստանէն, Աղուաններու երկրէն, և տիրապետելով Ատրպատականին, Հայաստան՝ Գարգմանի երկիրը ոտք չի կոխած, Արաքսի ափունքը՝ անոնք թաղմանական մեծ հանդէսի մը մէջ են։

Բլրան մը վրայ՝ հաստատած են թաթար զօրքին ընդհանուր հրամանատար Զարմաղանի պերճագեղ վրանը. հոս է գազան բռնակալը. վրանը շրջապատուած է բարձրահասակ կարիճ պահակներով, ամենուն ուսը կը փայլի լայնաբերան տապարներու սուր երկաթը. մերկ են. միայն առջևնին գոցուած է այծու մորթով. գլուխներին անցուցած են երկայն սրածայր թաղիքէ բեղոյրներ բոլորովին ճերմակ։

Ճախրաալաց արծիւներ դիակներու հոտէն մոլեգնոտ, կը կառանչեն, կը սաւառնին Զարմաղանի վրանին վրայ։ Վրացի վեց համահասակ նրբակազմ երիտասարդներ, բռնակալի վրանին առաջին աստիճանին վրայ կանգնած՝ ոսկիէ երկայն փողերն բերանին կը նուագեն. թաթար զինուորները դիմուած են անոնց խոշորագեղ սև աչուքներէն։ Լայնատարած դաշտին եզերքը ամէն կողմ բարձրացած են խարոյկներու փայտակոյտը։

Առաւօտ է, բանակներէն գազանային պոռչուտուքով աղաղակ մը կը պայթի. խարոյկները կրակ կ'առնեն, կը բացուին Զարմաղանի վրանին սնդուկ վարագոյրները. բռնակալը պատգարակին մէջն է. անոր առջևէն քրիստոնեայ գերուհիներ շղարշէ պարեգօտ մը հագած, յոտն ի մատն կայլաթթիռ կը յառաջեն։

Ջայլող վհուկներ կը շրջապատեն խարոյկները, ուր մի առ մի դիակներ կ'ածիւնանան։ Բարեկամ մարդիկներ սրտահառաչ կ'ողբան իրենց բարեկամներուն մահը։

© National Library of Armenia